

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 370-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 371-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Սուրեն Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի 3-րդ մասի և 371-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. 2026 թվականի հոկտեմբերի 22-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Սուրեն Գրիգորյանի (այսուհետ նաև՝ Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Մոնիկա Մարգարյան) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«(...)

(...) 2021 թ-ի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի 3-րդ մասը և 371-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված այն մեկնաբանությամբ, որով թույլատրելի է համարվում արդարացման դատավճիռը բեկանել և գործը նոր քննության փոխանցել՝ միաժամանակ մեղավորության, այդ թվում՝ սպանության ուղղակի դիտավորության և հանցափորձի էական հատկանիշների վերաբերյալ վերջնական բնույթի հաստատական եզրահանգումներ արտահայտելով, ճանաչել ՀՀ

Սահմանադրության 63-րդ և 66-րդ հոդվածներին հակասող և անվավեր՝ այդ մեկնաբանության շրջանակում:

Այլընտրանքորեն՝ նշված դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող միայն այն սահմանադրաիրավական մեկնաբանությամբ, որը բացառում է նոր քննության ենթակա մեղավորության հարցի կանխորոշումը:

Գնահատման ընթացքում հաշվի առնել նաև Սահմանադրության 67-րդ և 79-րդ հոդվածների երաշխիքները»:

2. Ներկայացնելով թիվ ԵԴ1/0293/01/23 քրեական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը Սահմանադրական դատարանի առջև բարձրացնում է տվյալ քրեական գործով Վերաքննիչ քրեական դատարանի 2026 թվականի փետրվարի 12-ին կայացրած որոշմամբ կիրառված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի 3-րդ մասի և 371-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի սահմանադրականության հարցը՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված այն մեկնաբանության շրջանակներում, որը թույլ է տալիս արդարացման դատավճիռը բեկանելիս և վարույթը նոր քննության փոխանցելիս մեղադրանքի էական տարրերի, այդ թվում՝ սպանության փորձի ուղղակի դիտավորության և համապատասխան արարքն այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով կատարելու վերաբերյալ արտահայտվել որպես արդեն հաստատված փաստեր:

Ըստ Դիմողի՝ քննարկվող համատեքստում վիճարկվում է նշված դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, որի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը կարող է արդարացման դատավճիռը բեկանել և գործը նոր քննության ուղարկել՝ իր պատճառաբանություններում վերջնական բնույթի հաստատական լեզվով որոշելով հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները: Դիմողի պնդմամբ՝ նման մեկնաբանությունը տարանջատված չէ դատական ակտը բեկանելու համար անհրաժեշտ ստուգողական գնահատականից:

Դիմողը գտնում է, որ այն պարագայում, երբ Վերաքննիչ քրեական դատարանը, գործն ուղարկելով նոր քննության, միաժամանակ հաստատված է

համարում սպանության դիտավորությունն ու հանցափորձի ավարտված չլինելու պատճառը, ստեղծվում է օբյեկտիվ վտանգ, որ տվյալ գործով նոր քննության շրջանակներում վերոնշյալ ձևակերպումները դատարանի կողմից կընկալվեն որպես արդեն լուծված հարցեր: Ըստ Դիմողի՝ այդ վտանգը ծագում է դատական ակտի լեզվից և դատավարական կառուցվածքից՝ անկախ նրանից, թե իրականում ինչ եզրահանգումների կգա դատարանը գործի նոր քննության շրջանակներում:

Դիմողը նշում է, որ Վերաքննիչ դատարանի՝ դատական ակտը բեկանելու և վարույթը նոր քննության փոխանցելու լիազորությունը չի ներառում նոր քննության արդյունքը կանխորոշելու իրավասություն: Դիմողի պնդմամբ՝ դատական ակտի բեկանման համար անհրաժեշտ փաստական կամ իրավական սխալի մատնանշումն անհրաժեշտ է տարբերակել մեղավորության հարցը վերջնականապես լուծող դատական գնահատականից: Հավելելով՝ Դիմողն ընդգծում է, որ ինքը չի պնդում, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէ իրականացնելու ապացույցների գնահատում, այլ վիճարկում է տվյալ գնահատման կատեգորիկության սահմանը, «(...) երբ այն համադրվում է գործը նոր քննության ուղարկելու հետ»:

Դիմողը գտնում է, որ «Արդար դատաքննության իրավունքը պահանջում է, որ մեղավորության հարցը քննվի դատարանի կողմից՝ պահպանելով ապացույցները վիճարկելու, պաշտպանական դիրքորոշում ներկայացնելու և դատական գնահատականի վրա ազդելու իրական հնարավորությունը: Եթե բեկանման որոշման պատճառաբանությունը կանխորոշում է այդ հարցը, նոր քննությունը կարող է կորցնել իր գործառնական իմաստը՝ նույնիսկ առանց վերաքննիչ դատարանի բացահայտ պարտադիր ցուցումի»:

Դիմողի պնդմամբ՝ վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրական թերությունն այն է, որ վերջինս Վերաքննիչ դատարանի ստուգողական եզրահանգումների անհրաժեշտ ծավալը չի սահմանազատում մեղավորության վերաբերյալ այնպիսի հաստատումներից, որոնք պատկանում են գործի նոր քննության արդյունքին:

Միաժամանակ Դիմողը նշում է, որ «Սույն դեպքում հարցը միայն դատախազի որոշման և Վերաքննիչ դատարանի որոշման միջև փաստական անհամաձայնությունը չէ: Պետք է կանխատեսելի լինի՝ ինչ չափով կարող է վերաքննիչ դատարանը, արդարացումը բեկանելով, մեղադրանքի բաղադրիչներն արդեն հաստատված համարել, և ինչ նշանակություն ունի նույն փաստի վերաբերյալ չվերացված արդարացնող դատավարական որոշումը»:

Ամփոփելով՝ Դիմողը գտնում է, որ «Սույն գործով սահմանադրական հարցն այն է, թե արդյո՞ք արդարացման դատավճիռը բեկանելիս և վարույթը նոր քննության փոխանցելիս վերաքննիչ դատարանը կարող է իր պատճառաբանություններում սպանության փորձի ուղղակի դիտավորությունը և մեղադրանքի մյուս էական տարրերը ներկայացնել որպես վերջնականապես հաստատված՝ առանց խաթարելու նոր քննություն իրականացնող դատարանի ինքնուրույն գնահատման պարտականությունը և Սուրեն Գրիգորյանի՝ ՀՀ Սահմանադրության 63-րդ և 66-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները»:

3. Ելնելով դիմումի, կից ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի միջոցով թիվ ԵԴ1/0293/01/23 քրեական գործով կայացված դատական ակտերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ**.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, **սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները** և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը*

հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ դրույթն ամրագրվել է նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

*բ) **երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները**,*

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում եթե **դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան**:*

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված **այլ դեպքերում**:*

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն նույն օրենքի 29-րդ*

հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքում, ***երբ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները****:*

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. *«(…) «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:*

Սահմանադրական դատարանը վերը նշված աշխատակարգային որոշմամբ արտահայտել է նաև իրավական դիրքորոշում առ այն, որ *«(…) ֆիզիկական և իրավաբանական անձանց համար սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը ծագում է քաղաքացիաիրավական, վարչաիրավական վեճերի կարգավորման, ինչպես նաև քրեական մեղադրանքի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտի և համապատասխանաբար՝ նշված վեճերի և քրեական մեղադրանքի հարցի լուծման իրավազորությամբ օժտված դատական մարմիններում պաշտպանության միջոցներն սպառելու արդյունքում: (…) Սահմանադրական «կոնկրետ վերահսկողության» նպատակն է ապահովել սահմանադրական արդարադատություն իրականացնելու իրավազորությամբ չօժտված՝ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների կողմից կոնկրետ գործերի լուծումը Սահմանադրությանը համապատասխանող օրենքների հիման վրա և իրականացնել անձի սահմանադրական իրավունքների պաշտպանությունը, երբ նրա իրավունքները խախտվել են արդարադատության իրականացման գործընթացում հակասահմանադրական օրենսդրական նորմի կիրառման արդյունքում»:*

Քննարկվող համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու սահմանադրական պահանջից բխում է, որ եթե առկա է (առկա է եղել) որևէ դատական ատյան, որը կարող է (էր) քննել դիմողի կողմից բարձրացված հարցը, սակայն դիմողը չի օգտվել այդ հնարավորությունից, ապա վերջինս չի սպառել**

դատական պաշտպանության բոլոր միջոցները: Այս իրավական պահանջի նպատակն այն է, որ կոնկրետ անձի հիմնական իրավունքներին վերաբերող հարցին բոլոր իրավասու դատարաններն իրենց լիազորությունների շրջանակներում անդրադառնան, որից հետո միայն Սահմանադրական դատարանը, ունենալով նաև տվյալ հարցի վերաբերյալ իրավասու բոլոր դատական ատյանների կողմից ձևավորված իրավակիրառ պրակտիկայում կիրառված նորմերի մեկնաբանությունները, անհատական դիմումի շրջանակներում անդրադառնա այդ հարցին և գտնի հանրային իշխանության բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց համար պարտադիր լուծումներ:

Վերը ներկայացված դրույթներով ամրագրված կարգավորումները, Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանը հանգում է հետևյալ եզրակացության.

այսպես՝ սույն անհատական դիմումի և թիվ ԵԴ1/0293/01/23 քրեական գործով կայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ **Դիմողը չի իրացրել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու սահմանադրական պահանջը**: Մասնավորապես՝ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի միջոցով խնդրո առարկա քրեական գործով կայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում հետևյալը.

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի օգոստոսի 11-ին կայացրած դատավճռով որոշել է. *«Ճանաչել և հռչակել Սուրեն Գագիկի Գրիգորյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով ներկայացված մեղադրանքում՝ արարքն ապացուցված չլինելու հիմքով»:*

Այնուհետև Վերաքննիչ քրեական դատարանի 2026 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ Ն. Հարությունյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ **Երևան քաղաքի առաջին**

ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2025 **թվականի օգոստոսի** 11-**ի դատավճիռը բեկանվել է և վարույթը փոխանցվել է նույն դատարան՝ նոր քննության:**

Վերաքննիչ քրեական դատարանի վերոգրյալ որոշման դեմ Դիմողի՝ մեղադրյալ Սուրեն Գագիկի Գրիգորյանի պաշտպան Մ. Մարգարյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի կապակցությամբ **Վճռաբեկ դատարանը** 2026 **թվականի սեպտեմբերի** 14-**ին կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում**:

Այսպիսով, ողջ վերոշարադրյալի հաշվառմամբ, **Վերաքննիչ քրեական դատարանի կողմից Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝** 2025 **թվականի օգոստոսի** 11-**ի դատավճիռը բեկանվելու և վարույթը նույն դատարան՝ նոր քննության փոխանցվելու պայմաններում**, **ստացվում է**, **որ տվյալ գործը գտնվում է նոր քննության փուլում:**

Այս առումով Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի միջոցով խնդրո առարկա քրեական գործով կայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում նաև պարզ է դառնում, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 8-ին կայացված՝ «Քրեական գործի վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին» որոշմամբ դատարանը որոշել է. *«Ստանձնել թիվ ԵԴ1/0293/01/23 (...) քրեական գործի վարույթը և նախնական դատալսումներ նշանակել 2026 թվականի հոկտեմբերի 22-ին՝ ժամը 15:00-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում (...)»:* 2026 թվականի հոկտեմբերի 22-ին նշանակված նախնական դատալսումների նիստը չի կայացել՝ տուժողի՝ դատական նիստի օրվա և ժամի վերաբերյալ պատշաճ ուղարկված ծանուցագիրը չստանալու պատճառով: **Նախնական դատալսումների հաջորդ նիստը նշանակվել է** 2026 **թվականի դեկտեմբերի** 2-**ին՝ ժամը** 15:00-**ին**

(հիմք է ընդունվում «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությունը)։ Այսպիսով, **սույն քրեական գործը դեռևս գտնվում է նոր քննության**, **մասնավորապես**, **նախնական դատալսումների փուլում**։

Վերոշարադրյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Սահմանադրական դատարանը 2022 թվականի հուլիսի 8-ի ՍԴԱՈ-120 աշխատակարգային որոշմամբ ընդգծել է, որ *սահմանադրական արդարադատություն հայցելու անձի իրավունքը, ինչպես նաև օրենսդրությամբ դրա իրացման նպատակով նախատեսված ընթացակարգային կարգավորումներն ինքնանպատակ չեն, ուստիև՝ հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող։ Նշված կարգավորումները միտված են դիմողի կողմից նախքան Սահմանադրական դատարան դիմելու իրավունքն իրացնելն իր ենթադրյալ խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման համար օրենսդրությամբ* ***նախատեսված բոլոր հնարավորություններն սպառելուն:***

Վերոշարադրյալի լույսի ներքո, հաշվի առնելով նաև Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **Դիմողը չի սպառել ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները**, հետևաբար՝ սույն պարագայում բացակայում է Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված համապատասխան պայմանը։ Ուստի՝ **Դիմողը Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ**։

Հետևաբար՝ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը **ենթակա է մերժման՝** Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2 և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ **Դիմողի՝ ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները չսպառելու**, **Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չլինելու հիմքերով**։

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2 և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Սուրեն Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի 3-րդ մասի և 371-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

17 նոյեմբերի 2026 թվականի
ՍԴԱՈ-249